

ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. ԳԵՎՈՐԳ Ե ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Անդամոց Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ Հայոց Սրբոյ Էջմիածնի Գերաշնորհ Տ. Մեսրովբ, Տ. Խորէն և Տ. Բագրատ Արքեպիսկոպոսաց և Գերապատիւ Տ. Գարեգին, Տ. Զաւէն և Տ. Գիւտ Եպեսիկոպոսաց, հարապատ որդւոց Մայր Աթոռոյս, ողջոյն և օրհնութիւն հայրապետական:

Հայրապետական կոնդակաւ Մերով ի 1-ն Յունուարի 1924 ամի ընդ համարաւ 1, պատճէն որոյ ընդ սմին առաքեմք, հաստատեցաք ի տեղի Սինոդի և Դիւանի Մերոյ կՀերագոյն Հոգևոր Խորհուրդ, ըստ այսմ.

Ա. Գերագոյն Հոգևոր Խորհուրդ Հայոց Ս. Էջմիածնի կազմեալ կայ ընդ նախագահութեամբ Մերով ի վեցից փորձառու Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց.

Բ. Ամենայն Առաջնորդք թեմօրէից մերոց են անդամք Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ և ի ժամ ներկայութեան նոցա աստ ի Սուրբ Էջմիածին և ի դէպս անհրաժեշտութեան յատուկ հրաւիրանօք եկեսցեն և մասնակից լիցին ժողովոց Գերագոյն Խորհրդոյ.

Գ. Ի բացակայութեան Մերոյ ի ժողովոց Գերագոյն Խորհրդոյ Տեղակալն Մեր է նախագահող Խորհրդոյն.

Դ. Ամենայն խնդիրք և գործք կրօնականք, վարչականք և տնտեսականք Մայր Աթոռոյս և եկեղեցեաց և թեմօրէից Հայաստանի և արտասահմանի, արկանին ընդ քննութեամբ յատենի Գերագոյն Խորհրդոյ և ստանան կվախճանական որոշումն և կլուծումն.

Ե. Գերագոյն Հոգևոր Խորհուրդն պարտ է, ըստ հնարաւորութեան և ներման հանգամանաց, փութացուցանել վկայմակերպումն ազգային-եկեղեցական ժողովոյ, ստանալով, ի բարեպատեհ ժամանակի, պոյլատուութիւն ի Խորհրդային Իշխանութենէ Հայաստանի:

Այսու հայրապետական կոնդակաւ Մերով հաստատեմք վՁեզ անդամս Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ և յանձնարարեմք.

Ա. Կազմակերպել վԴիւան Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ.

Բ. Կազմել վերջին հրահանգ վասն գործառնութեան և գործավարութեան Գերագոյն Խորհրդոյ.

Գ. Առնուլ և միաւորել վամենայն գործս Սինոդի և Հայրապետական Դիւանի ընդ հսկողութեամբ Գերագոյն Խորհրդոյդ և վարել վամենայն գործս յիշեալ երկուց հաստատութեանց.

Դ. Առնուլ ընդ հսկողութեամբ և տեսչութեամբ Գերագոյն Խորհրդոյդ վգանձատունն Մայր Աթոռոյս:

Օրհնելով վՁեզ, մաղթեմք ի Տեառնէ կար և վօրութիւն ձեզ ամենեցուն վասն ի կատար ածելոյ վամենայն պարտիս յաջողութեամբ՝ ի բարգաւաճումն Մայր Աթոռոյս, ի բարեկարգումն թեմական գործոց և ի պայծառութիւն Հայաստանեայց Սբ. Եկեղեցւոյս:

Ողջ լերուք, վօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և օրհնեալ ի Մէնջ: Ամէն:

ՎՇՏԱԼԻ ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 1 Յունուարի 1924 ամի,
Ըստ Տօմարիս ՌՅՀԳ (1373)
Ի Հայրապետութեան Մերոյ ԺԳ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ.
Թ. 2